

*Հրաչիկ Միրզոյան, Հայ գրքի և գրատպության պատմության փիլիսոփայական անդրադարձներ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, 396 էջ*

Վերջին շրջանում առիթ ունեցանք նշելու հայ գրատպությանը նվիրված երեք հոբելյան՝ ստեղծման 500-ամյակը, Ոսկան Երևանցու ծննդյան 400-ամյակը և հայերեն Աստվածաշնչի առաջին ամբողջական հրատարակության 350-ամյակը: Այս նշանակալից իրադարձությունների շրջանակում հրատարակվեց փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրաչիկ Միրզոյանի հոդվածների ժողովածուն:

«Ինչպես ծնվեց այս գիրքը» ներածականում հեղինակը նշում է, որ ժողովածուում տեղ են գտել տասնամյակների ընթացքում գիտական տարբեր պարբերականներում լույս ընծայված հայագիտական և փիլիսոփայական մտքի պատմությանը նվիրված ուսումնասիրություններ, ընտրանքային հոդվածներ: Թեև դրանց մի մասը տասնամյակների վաղեմություն ունի, սակայն դրանցում նկատելի է ժամանակաշրջանի ու նյութի ընդհանրություն, ինչը արդարացնում է նման ձևաչափով ժողովածուի լույսընծայումը: XVII-XVIII դարերում փիլիսոփայական միտքը արտացոլված էր ինքնուրույն և թարգմանական գրքերում, և այս գաղափարը տարրալուծված է գրախոսվող ժողովածուի երեք բաժիններում:

Առաջին բաժնի հոդվածներն ու հրապարակումները նվիրված են Ոսկան Երևանցուն և նրա գրահրատարակչական գործունեության բազմակողմ քննությանը: Այս կամ այն չափով նրա հետ առնչվում են նաև Առաքել Դավրիժեցուն, Միմեոն Ջուղայեցուն և Ոսկան Երևանցու կրտսեր եղբայր Ավետիս Երևանցուն վերաբերող ուսումնասիրությունները: Այսպես օրինակ՝ «Առաքել Դավրիժեցու պատմության առաջին հրատարակության մասին» հոդվածում ցույց են տրվում Ոսկան Երևանցու «տպագրական արվեստի, գիտելիքների և աշխարհըմբռնման» առանձին մանրամասները: Այդ նպատակով Հ. Միրզոյանը համեմատել է Առաքել Դավրիժեցու պատմության ձեռագիր և տպագիր օրինակները և պարզել, որ Ոսկան Երևանցին ձեռքի տակ ունեցել է նրա երկի նախնական տարբերակը, 1669 թ. տպագրելիս «կուռ շարադրանք ստանալու համար» որոշակիորեն միջամտել է հեղինակային բնագրին և այն ձերբագատել «սնահատավատության հատվածներից», կատարել որոշակի հավելումներ ու լեզվական փոփոխություններ:

Ոսկան Երևանցուն և նրա ավագ ընկեր Միմեն Ջուղայեցուն նվիրված հոդվածում ճշգրտվում են գաղափարական, փիլիսոփայական և դավանաբանական ըմբռնումներին վերաբերող մի շարք հարցեր. ըստ էության վիճարկվում են Կարապետ եպս. Ամատունու «Ոսկան վրդ. Երևանցի և իր ժամանակը» գրքում տեղ գտած որոշ դրույթներ ու տեսակետներ: Ի դեպ՝ Շ. Միրզոյանի գրչին է պատկանում «Միմեն Ջուղայեցի» մենագրությունը (1971), որը վկայում է այս հարցերում հեղինակի քաջատեղյակության մասին: Նշված հոդվածում նա եզրակացնում է, որ Ոսկան Երևանցին ու Միմեն Ջուղայեցին ոչ թե հակամարտել են, ինչպես ներկայացրել է Կարապետ եպս. Ամատունին, այլ ընդհակառակը՝ բարեկամական հարաբերություններ են ունեցել, որոնցից ածանցվում է նաև նրանց գիտական միակամությունը:

Հոդվածներից երկուսը վերաբերում են Ոսկան Երևանցու «Յաղագս միութեան և միաւորութեան...» փիլիսոփայական երկին, որը սկզբնապես տպագրվել է իբրև Առաքել Դավրիժեցու պատմության ԾԸ գլուխ: Շ. Միրզոյանը նախ հրատարակել է այս երկի բնագիրը, այնուհետև դրա ռուսերեն ու աշխարհաբար թարգմանությունները:

Ուշագրավ է Առաքել Դավրիժեցու պատմության ձեռագրերում օձագալար պատկերի մեկնաբանությունը «Ինքնալրացում կամ մեկ նկարի պատմություն» հոդվածում: Նրա պատմության ձեռագիր օրինակներում պահպանվել են մինչ այդ ուշադրության չարժանացած՝ օսմանյան սուլթանների հերթագայությունը ցույց տվող օձագալար պատկերի տարբերակներ, որոնք թվարկում են 18 սուլթանների՝ սկսած Օսման առաջինից: Հեղինակի իրավացի կարծիքով, միայն այս գծապատկերը բավական է հերքելու թուրքական պատմագրության «այն անհերթ թեսակետը, որ իբր հայ ժողովուրդը դարեր շարունակ վայելել է թուրք իշխանավորների «հայրական» վերաբերմունքը, որ իբր հայերի ու թուրքերի միջև ոչ մի թշնամանք չի եղել, ուստի 1915 թ. կատարվածի համար իբր մեղավոր են ոչ թե երիտթուրք մարդակերները, այլ նրանց գազանություններին զոհ դարձած հայ նահատակները» (էջ 79):

«Ոսկանապատումի» մեկ այլ հրապարակմամբ Շ. Միրզոյանն ապացուցում է, որ Առաքել Դավրիժեցու պատմության տպագիր օրինակում ԾԷ գլխի հեղինակը ինքը՝ Ոսկան Երևանցին է և ներկայացրել է իր ինքնակենսագրությունը: Ընդ որում այն «չի դարձել կենսագրական փաստերի սուսկական շարադրանք, այլ իրենից ներկայացնում է հրապարակախոսական մի փայլուն պամֆլետ՝ ուղղված իր ժամանակի ու հետագա դարերի գիտության ու լուսավորության թշնամիների դեմ» (էջ 84), որը, ինչպես եզրակացնում է հեղինակը, «պահպանողական ուժերի դեմ պայքարի թափով» նմանվում է Պատմահոր Ողբին: Նման ընդհանրացումների համար անհրաժեշտ է նաև ժամանակի պատմական, մատենագրական, ձեռագրական ամբողջ պատկերի իմացություն, որն ինքնին պահանջում է բազմաթիվ գիտակարգերի իմացություն, որն ակնհայտ է գրքի որևէ հոդվածն ընթերցելիս:

Մեկ այլ հոդվածում պատմաբանասիրական փաստերով Հ. Միրզոյանը Ոսկան Երևանցու եղբորը՝ Ավետիս Դլիճենց Երևանցուն է վերադարձնում տպագրիչի (և ոչ թե սուկ վաճառականի) համբավը, որը մինչև 1663 թ. տպագրել է հինգ անուն գիրք: «Հենց միայն այն փաստը, որ այսօր հայ գրքի մատենագիտության մեջ գործածվում է «Ավետիսի տառեր» հասկացությունը, ինքնին վկայում է այդ մարգում նրա ունեցած անուրանալի վաստակի մասին», - փաստում է հեղինակը (էջ 119):

Ոսկան Երևանցու գիտական բոլոր դրույթներն ամփոփված են գրական-հրապարակախոսական «Գրական թերթում» 2014 թ. տպագրված «Ոսկան Երևանցու դասերը» խորագրով կուռ հոդվածում: Իր գործին և գրատպությանը՝ Ոսկան Երևանցու անձնագոհ ու անշահախնդիր նվիրումը նկատի ունենալով՝ Հ. Միրզոյանը գրում է. «Ո՛ւր էր, թե մերօրյա եթե ոչ հայագրի բոլոր գործարարները, ապա նրանցից թեկուզ ոմանք ապրեին ու գործեին ոսկանաբար կամ սկսեին մտածել նրա օրինակին հետևելու մասին» (էջ 101):

Ժողովածուի երկրորդ մասը՝ «Ձանագանք» վերտառությամբ, ամփոփում է հեղինակի փիլիսոփայական, քերականագիտական, եկեղեցու պատմությանն առնչվող ինը հոդված: Կարելի է կարծել, թե դրանք բովանդակային սերտ կապ չունեն թե՛ միմյանց և թե՛ Ոսկան Երևանցու հետ, բայց իրականում ներքին բովանդակությամբ դրանք շաղկապված են մեկը մյուսին, և դա առաջին հերթին XVII-XVIII դարերում հայ մտքի վերազարթոնքն է մեր գրավոր մշակույթի գրեթե բոլոր ոլորտներում: Ընդգծելով դրա կարևորությունը՝ Հ. Միրզոյանը թե՛ գրախոսվող ժողովածուում և թե՛ մի շարք այլ առիթներով այդ ժամանակաշրջանը ներկայացնում է որպես «հոգևոր վերելքի ու վերածնունդի» նոր շրջան հայ մշակույթի մեջ (էջ 133):

Բայց մինչ այդ դարին հասնելը գրքում բերված է Դավիթ Անհաղթի «Սահմանք»-ի գնահատման շուրջ հոդվածը՝ փիլիսոփայական մի հրապարակում, ուր ցայտուն դրսևորված է փիլիսոփայության պատմության՝ Հ. Միրզոյանի իմացության նշաձողը: «Անհաղթը հայ իրականության մեջ խաղացել է նույն դերը, ինչ Արիստոտելը համաշխարհային իրականության մեջ», - նշում է նա (էջ 123), իսկ ելակետային այս դրույթից հետո անդրադառնում հետևյալ հարցադրմանը. «Ինչու է Անհաղթը գրել իր այս աշխատությունը՝ վերնագրելով այն «Սահմանք» (էջ 125), որն ամբողջ միջնադարում հայ իրականության մեջ փիլիսոփայական ամենից կարևոր դասագիրքն էր: Հոդվածում տրված են Հովհաննես Իմաստասերի (XI-XII դդ.), Վանական վարդապետի (XIII դար), Առաքել Սյունեցու (XIV-XV դդ.)՝ «Սահմանքի» մեկնաբանություններն այդ հարցի առնչությամբ, որոնք քաղված են ձեռագրական սկզբնաղբյուրներից: Տարբեր մեկնաբանություններից է այն, որ ի թիվս Դավիթ Անհաղթի նշված երկը գրելու դրդապատճառների՝ երկրորդական դեր չի խաղացել ազգասիրական՝ հայ իրականության մեջ փիլիսոփայական տեսությունները ներմուծելու մղումը:

Հովհաննես Ջուղայեցու «Գիրք սրբազնագործութեան» երկին նվիրված հոդվածը քրիստոնեության բարոյափիլիսոփայական սկզբունքների համադրությունն է: Առհասարակ այս բաժնում և այլուր շատ են XVII դարի հեղինակներին նվիրված հրապարակումները, որոնք, երկրորդենք՝ Հ. Միրզոյանը ներկայացնում է որպես «նոր վերածնունդի» արդյունք:

Այստեղ մատնանշենք սույն ժողովածուի արժանիքներից ևս մեկը. վերլուծություններից գատ ընթերցողին են մատուցվում միջնադարյան պատմագրական ու փիլիսոփայական արժեք ներկայացնող մի շարք բնագրեր, այդ թվում՝ Հովհաննես Ջուղայեցու «Համառօտ տրամաբանութիւնը», «Քերականութիւնը», Մ. Գրքի Մխիթար Մեբաստացու տպագրությանը նվիրված՝ Հովսեփ Ջուղայեցու գրչին պատկանող անտիպ գրախոսականը և այլն:

Ի դեպ՝ հարկ է նշել, որ Հովսեփ Ջուղայեցու «Քննիկոնը», որի մասին գրում է Հ. Միրզոյանը, և որը պարսկահայերի և առհասարակ Իրանի պատմության ուշագրավ երկերից է, մեր համոզմամբ, կարիք ունի նորովի հրատարակության: Պահպանված հինգ ձեռագրից երկուսը գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, որոնցից օգտվել է հեղինակը, ևս երկուսը՝ Նոր Ջուղայում, մեկը՝ Անթիլիասի ձեռագրատանը:

Հայ եկեղեցու պատմության մի կնճռոտ խնդրի քննություն է Հակոբ-Եղիազարյան հակամարտությանը նվիրված հոդվածը: 1693 թ. Նոր Ջուղայում տպագրված մեկական էջանոց երկու փաստաթղթերի քննությամբ Հ. Միրզոյանը սրբագրում է գիտական մի փաստ և նշում, որ «Յաղագս կարգի կաթողիկոս ձեռնադրութեան» գրությունն ընդունվել է Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ և ուղղված է Եղիազար Այնթապցու կողմից հակաթոռ կաթողիկոսություն հիմնելու քայլերի դեմ: Ի դեպ, հայագիտության մեջ մինչ այդ հակառակ կարծիքն է իշխել, ըստ որի՝ դրանք իբր ուղղված են եղել Հակոբ Ջուղայեցու դեմ:

Հ. Միրզոյանն անդրադառնում է նաև «Էփիմերտե» ժողովածուին և այն նորովի գնահատելու ու արժևորելու փորձ կատարում: Նա կարծում է, որ մասնավորապես քաղաքական բնույթի գուշակությունները «կարող են հուսալի աղբյուր ծառայել այս կամ այն պատմաշրջանի սոցիալական դասի ու դասակարգի, ազգի ու ժողովրդի հասարակական-քաղաքական տրամադրությունները, երազանքները ու ձգտումները բացահայտելու համար» (էջ 161):

Գրքի երրորդ բաժինը ընդգրկում է 1966 թվականից մինչ մեր օրերը տպագրված ինը գրախոսություն: Դրանց թեմատիկան և բովանդակությունը ևս առնչվում են փիլիսոփայության պատմությանն ու տրամաբանությանը, հայ հնաստիպ գրքին: Գրախոսությունները նվիրված են Էդ. Հարությունյանի «Հայ փիլիսոփայական միտքը XIX դարի առաջին կեսին» (1965) և «Դեղուկ-տիվ տրամաբանության տեսության հարցեր» (1972) գրքերին, Ի. Ս. Նարսկու «Հակասությունների խնդիրը դիալեկտիկական տրամաբանության մեջ» (1969) և «Դիալեկտիկական տրամաբանության և տեսության հարցեր» (1969)

ռուսերեն մենագրություններին, Ս. Արևշատյանի «Փիլիսոփայական գիտության ձևավորումը հին Հայաստանում. V-VI դդ.» (1973), Ռ. Իշխանյանի «Հայ գրքի պատմություն» (հ. Ա, 1977) ուսումնասիրություններին, ինչպես նաև «XVI-XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը» (1989) ժողովածուին:

Հեղինակի քննական գրախոսությունները հաճախ պարունակում են բանավիճային հարցադրումներ. նա չի վարանում բարձրացնել գիտական հրատապ խնդիրներ կամ բարձրաձայնել դրանց մասին: Օրինակ՝ ճշգրիտ փաստերի միջոցով նա հուշում է, որ Հովհաննես Մրքուզը տարիքային բերումով չէր կարող Աստվածատուր Սալթանյանի ուսուցիչը լինել, ինչպես ներկայացրել է Հովհ. Ղուկասյանը «Բոգդան Սալթանով» պատմավեպում: Այս և այլ անճշտություններից խուսափելու համար առաջարկվում է նախապես կազմակերպել մասնագիտական քննարկումներ:

«Մովետահայ բառարանագրության հրատապ խնդիրը» գրախոսության մեջ հեղինակը կոնկրետ օրինակներով և հղումներով վեր է հանում տասնամյակներ շարունակ լայնորեն գործածված ռուս-հայերեն քառահատոր բառարանի (1954-1958) և Արարատ Ղարիբյանի միահատոր բառարանի բացերը՝ նշում, որ դրանք չեն «արտահայտում ռուսաց գրական լեզվի զարգացման ներկա մակարդակը» (էջ 340), իսկ Ա. Ղարիբյանի բառարանն ուղղակի «չունի գործնական արժեք» (346): Դժվար չէ պատկերացնել, թե իր ժամանակին՝ 1977 թ., կարծրատիպերի դեմ ուղղված ինչպիսի համարձակ պնդումներ էին թե՛ այդ մտքերը և թե՛ Հ. Միրզոյանի առաջարկությունը՝ հեղինակային խմբի միջոցով ստեղծել ռուս-հայերեն նոր՝ առավել կատարյալ բառարան: Ի դեպ, տողատակում նա նշում է. «Ցավոք առայժմ սայլը տեղից չի շարժվել» (էջ 349):

Ի՞նչն է հատկանշական Հ. Միրզոյանին: Նախ և առաջ այն, որ բոլոր բաժիններում կարելի է գտնել գիտական որոշակի նորույթ պարունակող դրույթներ: Նա նյութերը սեփական քննությամբ քաղել է ձեռագիր և տպագիր մեծաթիվ սկզբնաղբյուրներից, ուստի և հողվածներում արված գիտական հարցադրումները փաստական հիմք ունեն: Ժողովածուի տարբեր հրապարակումներում տեղ գտած եզրակացություններն ու ընդհանրացումները հիմնականում անհերքելի են և անառարկելի, որոնք ոչ թե վարկածային պնդումներ են, այլ ունեն բնագրային հստակ վկայակոչումներ: Ահա մեկ օրինակ. երբ հեղինակը նշում է, թե Առաքել Դավրիժեցին իր պատմությունը ավարտելուց հետո է ավելացրել ՕԵ գլուխը, դա ապացուցում է նրանով, որ այն առկա է Մաշտոցի անվան Մատենադարանի՝ 1663 թ. ընդօրինակված թիվ 1773 ձեռագրում, բայց չկա ո՛չ 1666 թ. արտագրված թիվ 1772 ձեռագրում և ո՛չ 1669 թ. ոսկանյան հրատարակության մեջ: Ընդ որում՝ ձեռագրում այն նախորդում է գրչի հիշատակարանին և զբաղեցնում 420բ-431բ էջերը: Հետևաբար, այն հավելել է անձամբ Առաքել Դավրիժեցին, որը նախապես պայմանավորվել է գրչի հետ՝ այդ էջերը թողնել դատարկ:

Գրքի ևս մեկ կարևոր բնութագիր. եթե Հ. Միրզոյանը վստահ է իր ճշմարտացիությանը, ապա չի վարանում հայտնել դա՝ անգամ բանավեճի մեջ մտնելով բնագրի հեղինակի հետ: Այդպես է, օրինակ, նույն Առաքել Դավրիժեցու պարագայում, երբ նա պնդում է, թե Ոսկան Երևանցու միջամտությունները «գրքին ավելի կատարյալ և գիտական տեսք են տվել» (էջ 17): Ըստ այդմ՝ քննարկվող ժողովածուն աչքի է ընկնում ձեռագրագիտության փաստերը ներառելու առումով, որոնց միջոցով մասնավորապես գիտությանն ի ցույց են դրվել Առաքել Դավրիժեցու ձեռագիր պատմության և ոսկանյան հրատարակության միջև առկա որոշակի տարբերությունները և այլ ուշագրավ փաստեր:

Ներկայացնենք մեկ-երկու՝ մեր համոզմամբ գրքի որակի բարձրացմանը միտված դիտարկումներ: Ժողովածուն մեծապես կշահեր, եթե օժտված լիներ գրականության և հատուկ անունների ցանկերով, քանզի հեղինակը գրում է տասնյակ գործիչների մասին, առավել ևս XVII դարի հայ մշակույթի գրեթե բոլոր գործիչներին հաճախ անդրադառնում է եզակի փաստերով կամ մեկնաբանություններով:

Վերջին շրջանում նկատելի են Ոսկան Երևանցուն լատինամետության բնութագրից դուրս բերելու փորձեր՝ հենվելով նրա գրահրատարակչական և թարգմանական գործունեության, նամակների լեզվի և այլ փաստերի վրա: Փոխարենը հեղինակը նրան համարում է «լատինաբանության ակնառու հետևորդներից» (էջ 26), մինչդեռ փաստերը հուշում են, որ նա եղել է առավելագույնը դրա ազդեցության կրողը, այլ ոչ թե «ակնառու հետևորդը», ինչպիսին կարելի է համարել Վարդան Հունանյանին, Հովհ. Կոստանդնուպոլսեցուն և այլոց:

Հոդվածների տպագրության ժամանակագրական հերթականությունը խստորեն պահպանելու պատճառով Հովհ. Ջուղայեցուն նվիրված երկու տարբեր հոդվածներ ընդմիջարկվել են մեկ այլ՝ «Էփիմերտի» մասին հոդվածով: Նույն կերպ Ոսկան Երևանցու «Միութին և միաւորութին...» երկի աշխարհաբար թարգմանությունը զետեղվել է գրաբար բնագրից և ռուսերեն թարգմանությունից հեռու:

Վերջում նշենք, որ հայագետների սեղանին է դրվել բազմաբնույթ նորույթներ, փաստեր, ճշգրտումներ պարունակող հոդվածների արժեքավոր ժողովածու, որը մեծապես օգտակար է հայ փիլիսոփայության պատմության, գրահրատարակության, XVII-XVIII դարերի հայ մտքի, բանասիրության, եկեղեցու պատմության և այլ ոլորտների մասնագետների համար:

*ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ*